



# Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՆԵՂՅԻ

### Անառապին Կիրակի

25 ՓԵՏՐՈՒՄ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Նոր Մարդը (Ա4)	Էջ 4
«Ուխտին Տապանակը» (45)	Էջ 5
Ծանուցումներ	Էջ 7

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ**  
 (54.11-55.13)

**Տ** էրը այսպէս կ'ըսէ.  
 «Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտուածիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափիւղայ քարերով պիտի դնեմ, պատկերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիւրեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, զաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս: Ա՛լ բռնութեան վախը պիտի չունենաս, արհաւիրքը քեզի պիտի չմօտենայ: Քեզի եկողները պիտի ըլլան միայն անոնք՝ որոնք ինձմով դարձի կու գան. իրենց երկիրները ձգելով պիտի գան քու կողքիդ բնակին, քեզ իրենց ապաստանը դարձնելով: Ահա ես ինքս քեզ հաստատեցի. դարբինը իր փքոցով կրակը կ'արծարծէ եւ կը շինէ գործիքներ՝ որոնք գործածութեամբ կը մաշին ու կը փճանան. սակայն ես քեզ հաստատեցի որ միշտ մնաս: Որեւէ զէնք պիտի չյաջողի քեզի վնասել, որեւէ լեզու որ կը փորձէ քեզ դատապարտել՝ պարտութեան պիտի մատնես, եւ քեզ ամբաստանողները իրենք պիտի դատապարտուին: Տիրոջ ծառայողներուն ժառանգութիւնը ա՛յս է. ե՛ս է որ

զանոնք կ'արդարացնեմ,- կ'ըսէ Տէրը: Դուք որ ծարաւի էք՝ ջուրին եկէք, եւ դուք որ դրամ չունիք՝ եկէք զինի ու կաթ առէք առանց դրամի, առանց զին վճարելու: Ինչո՞ւ ձեր վաստակը կու տաք այնպիսի բաներու որոնք չեն կշտացներ: Ինձի մտիկ ըրէք եւ բարիք պիտի վայելէք, բարիքներով պիտի կշտանաք: Ականջ տուէք խօսքերուս եւ պատուէրներուս հետեւեցէք: Եթէ մտիկ ընէք ինձի, բարիքներու մէջ պիտի ապրիք, ձեզի հետ յաւիտենական ուխտ մը պիտի կնքեմ, եւ ձեզի պիտի տամ այն իսկական օրհնութիւնը զոր Դաւիթի խոստացայ: Ես զինք հեթանոսներուն վկայ եւ ազգերուն իշխան ու հրամանատար կարգեցի: Քեզ չգիտցող ազգեր քեզի պիտի դիմեն, քեզ չճանչցող ժողովուրդներ քեզի պիտի ապաւինին քու Տէր Աստուծոյդ՝ Իսրայէլի Սուրբին համար, որ քեզ փառաւորեց»:

Փնտուեցէք Տէրը, որքան ատեն որ կրնաք զինք գտնել. կանչեցէք զայն, որքան ատեն որ կրնաք զինք գտնել. կանչեցէք զայն, որքան ատեն որ մօտիկ է: Ամբարիշտը իր չար ճամբաներէն եւ անօրէնը իր չար խորհուրդներէն թող հրաժարի եւ Տիրոջ դառնայ, եւ Տէրը պիտի ողորմի անոր. թող մեր Աստուծոյն դառնայ, որ կը ներէ նոյնիսկ եթէ բազմապատիկ ըլլան ձեր մեղքերը: «Որովհետեւ, իմ խորհուրդներս ձեր խորհուրդներուն պէս չեն, իմ ճամբաներս ձեր ճամբաներուն չեն նմանիր,- կ'ըսէ Տէրը: Այլ, որքան երկիրքը երկրէն բարձր է՝ այնքան բարձր են իմ ճամբաներս ձեր ճամբաներէն, եւ իմ խորհուրդներս՝ ձեր խորհուրդներէն: Ինչպէս անձրեւն ու ձիւնը երկիրքէն կ'իջնեն եւ երկիրք չեն բարձրանար կրկին մինչեւ երկիրը չոռոզեն, զայն չարգասաւորեն ու

չաղտորեն, եւ սերմանողին սերմ եւ ուտելիք հաց չտան, այնպէս ալ իմ բերնէս ելած խօսքը ապարդիւն ինծի պիտի չդառնայ, մինչեւ իմ կամքս կատարէ եւ նպատակներս յաջողցնէ: Այո, ուրախութեամբ դուրս պիտի գաք ձեր գերութենէն եւ խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք. լեռներն ու բլուրները պիտի խայտան եւ ցնծութեամբ ընդունին ձեզ, եւ դաշտի բոլոր ծառերը իրենց ճիւղերով ծափ պիտի զարնեն: Յրդենիին տեղ նոճի եւ դժնիկին փոխարէն մրտենի պիտի բուսնի. եւ ասիկա Տիրոջ անունին համար անջնջելի, յաւիտենական նշան մը պիտի ըլլայ»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (6.1-7.1)**

**Ա**րդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծոյ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուած կ'ըսէ.

«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ, երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»:

Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա է փրկութեան օրը:

Ոեւէբանով պատճառմի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խռովարարներու յարձակումները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք մաքուր սիրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ զօրութեամբ եւ արդարութեամբ զինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ճանչնալ. մենք գիտենք թէ մեզ լա՛ւ կը ճանչնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք գիտենք թէ

կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք ուրիշներու կեանքերը կը ճոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչի՛նչ ունինք, մինչ ամէն ինչ ունինք:

Ահա, սիրելի՛ Կորնթացիներ, ամէն ինչ բաց եւ անկեղծ սիրտով ըսի ձեզի: Դուք ինչո՞ւ կը դժուարանաք արտայայտուելու: Ո՛չ իմ պատճառովս հարկաւ, այլ պարզապէս՝ ձեր սէրը ինծի արտայայտելու կը քաշուիք: Բայց կ'ուզեմ որ ինծի պէս բանաք ձեր սիրտերը եւ ազատօրէն խօսիք դուք ալ. չէ՞ որ իմ գաւակներս էք դուք:

Բնա՛ւ, անհաւատներուն գործակից մի՛ ըլլաք: Ի՞նչ կապ կրնայ ունենալ արդարը անօրէնին հետ, կամ ի՞նչ նոյնութեան եզր կրնայ ըլլալ լոյսին եւ խաւարին միջեւ: Ի՞նչ համաձայնութիւն կրնայ ըլլալ Քրիստոսի եւ սատանային միջեւ, կամ ի՞նչ գործ ունի հաւատացեալը անհաւատին հետ: Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ:

Արդարեւ մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

Ահա՛ թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.

«Անջատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլաք,՝ կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկրորդովը ապրելով:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (15.1-32)**

**Մ**աքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի կու գային՝ զինք լսելու համար: Փա-

ըրեսցիններն ու օրէնքի ուսուցիչները սկսան տրտնջալ, ըսելով. «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս մարդը մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կը ճաշէ»:

Յիսուս հետեւեալ առակները պատմեց անոնց.-

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը արօտավայրին մէջ եւ չ'երթա՞ր կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ գայն: Եւ երբ գտնէ, ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին»:

«Կամ ենթադրենք թէ կին մը տասը արծաթ դահեկան ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, ճրագը չի՞ վառեր եւ տունը ուշադրութեամբ չ'ա՞լիեր, մինչեւ որ դահեկանը գտնէ: Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ»:

Ապա շարունակեց.-

«Մարդ մը երկու գաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի»: Եւ հայրը իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

«Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը ղրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներով իր փորը

լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.-

Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս նկատէ քու գործաւորներէդ մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու զթաց. վազելով դիմաւորեց գայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

«Մինչ այդ, երէց գաւակը ագարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երզի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Նղբայրդ եկաւ. եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց»: Երէց գաւակը գայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ ան պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»: Հայրը ըսաւ. «Տղա՛ս, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»»:

# ՆՈՐ ՄԱՐԴԸ

ԹԱՄԸՍ ՄԸՐԹԸՆ  
ԹԱՐԳԱ ՄԱՀԱԿՈՒՄԻ

## ՆԵՐՔԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

4

Մարդը կատարելապես ողջ է, երբ հարազատորեն ինքնաբուխ կերպով ու ամենայն անկեղծութեամբ իր իսկ գոյութեան ճշմարիտ նպատակին ինքզինքն նուիրելու փորձառութիւնը կ'ապրի, գէթ քիչ մը: Այլ խօսքով, մարդը ողջ է՝ ո՛չ թէ միայն երբ գոյութիւն ունի, ո՛չ թէ միայն երբ գոյութիւն ունի եւ կը գործէ որպէս մարդ (այսինքն՝ ազատօրէն), այլ ամէն ինչէ վեր՝ երբ գիտակից է, թէ իր ազատութիւնը իրական ու նուիրական է: Եւ նոյն ատեն, գիտէ թէ կարող է այդ ազատութիւնը ամբողջապէս նուիրելու նպատակին, որուն համար իրեն տրուած է ատիկա:

Եւ այս գիտակցումը չի յայտնուիր՝ մինչեւ որ իր ազատութիւնը գործնապէս չնուիրուի իր ճշմարիտ նպատակին: Մարդը «ինքզինք կը գտնէ» եւ երջանիկ է, երբ ի վիճակի կ'ըլլայ տեսնելու, թէ իր ազատութիւնը «ինքնաբուխ կերպով եւ աշխուժօրէն կը բանի իր ամբողջ լինելութիւնը ուղղելու դէպի նպատակը, դէպի խորագոյն հոգեւոր կեդրոնը, որուն հասնելու համար կը մաքառի»<sup>3</sup>: Նպատակը կեանքն է, բառին լիագոյն իմաստով — ոչ լոկ անհատական, անձնակեդրոն, եսապաշտ կեանքը որ դատապարտուած է մահուամբ վերջանալու, այլ կեանքը որ կ'անդրանցնի անհատական սահմանափակումներն ու պէտքերը, եւ կ'ըլլայ անհատական անձէն անդին՝ Բացարձակին մէջ — Քրիստոսի եւ Աստուծոյ:

Մարդը ճշմարտապէս ողջ է, երբ գիտակից է ինքզինքին՝ որպէս իր սեփական վախճանին ցկեանս կամ ցմահ տէրը. երբ գիտակից է իրողութեան, թէ իր գերագոյն կատարելագործումը կամ կործանումը կախեալ է իր ազատ ընտրութենէն, եւ երբ գիտակից է, թէ ինք կարող է սեփական որոշումը առնելու: Այս է սկիզբը ճշմարիտ կեանքին:

Սակայն եւ այնպէս, ասիկա եւս տեսութիւն եւ

ցանկալի գաղափար է: Ի՞նչ է իրականութիւնը: Անկեալ մարդը, որուն մէջ կեանքն ու մահը պայքարի մէջ են տիրելու իրեն, չի կրնար ինքզինքին տէրը ըլլալ կատարելապէս. ան այլեւս ուժ չունի ունայնութեան մէջ օգնութիւն աղաղակելու: Արդարեւ, օգնութիւնը կու գայ՝ իբր անբացատրելի պատասխան իր աղաղակին, սակայն բնաւ երբեք ըստ իր ակնկալութեան: Ասիկա կարելի՞ է «ինքզինքին տէրը ըլլալ» համարել: Յարակարծականօրէն, այստեղ է եւ այստեղ է միայն, որ մարդը իր հոգեւոր վախճանին տէրը ըլլալու շնորհքը ունի: Այստեղ է, որ ան կ'ընտրէ: Այստեղ է, որ գոյապայքարի համար յուսահատեցնող պայքարին մէջ, իր ազատութիւնը «ինքնաբուխ կերպով եւ աշխուժօրէն կը բանի իր ամբողջ լինելութիւնը առաջնորդելու դէպի նպատակը, որուն հասնելու համար կը մաքառի»: Որքա՞ն զգոյշ պէտք է ըլլանք ուժի եւ ինքնիրագործման այս ժրարիւն (sanguine) փոխաբերութիւններուն հետ: Մարդուն իրական ուժը թաքնուած է մէջը օրհասական անձկութեան, որ զինք կը մղէ առ Աստուած աղաղակելու, եւ հոն է, որ ինք միաժամանակ թէ՛ անկարող է, եւ թէ՛ ամենակարող: Ան ինքնիրմէջ բացարձակապէս անկարող է, եւ սակայն ամէն ինչ կրնայ տանիլ շնորհիւ Անտեսանելիին որ զինք կը զօրացնէ<sup>4</sup>:

Circumdedere me! <sup>5</sup>...

Մահուան աշխարհը զիս պաշարեց,  
եւ մահուան որոգայթները լարուեցան ինձի դէմ:

Նեղուքեան մէջ Տիրոջ դիմեցի,  
փրկութեան համար իմ Աստուծոյս աղաղակեցի,  
եւ ան իր տանարէն լսեց ձայնս,  
աղաղակս անոր ականջը հասաւ:  
Այն ատեն երկիրը սասանեցաւ ու դողաց,  
լեռներուն հիմերը շարժեցան  
ու սասանեցան անոր բարկութենէն:  
Անոր փթէն ծուխ բարձրացաւ,  
բերնէն լափող կրակ ժայթքեց,  
եւ կայծակներ սուրացին ամէն կողմ:  
Ան երկինքը խոնարհեցուց եւ իջաւ,  
թանձր ամպի վրայ կանգնած:  
Քերովրէի մը վրայ հեծաւ եւ թռաւ,  
ու հովին թեւերով սլացաւ:  
Խաւարը իրեն ծածկոյթ դարձուց,  
զինք շրջապատող խաւարային ջուրերն ու  
ամպերը՝

իրեն բնակարան:  
... Բարձրէն ձեռքը երկարեց, զիս բռնեց  
եւ բազմաթիւ փորձանքներէ դուրս հանեց:

Սղ 18 (17). 5-11, 16 6

Այլ խօսքով, ճշմարիտ կեանքը անձին բուսական լինելութիւնը չէ, ոչ ալ կենդանական ինքնահաստատումը եւ ինքնագոհացումը: Անիկա ազատութիւն է, որ կ'անդրանցնի անձը եւ «այլ»ին մէջ կ'ըլլայ սիրով: Ամբողջապէս Աստուծոյ պարգեւն է անիկա: Ազատութիւն մը՝ որ «իր կեանքը կը կորսնցնէ, որպէսզի զայն գտնէ»<sup>7</sup>, փոխանակ զայն պահելու եւ ապա կորսնցնելու: Կեանքին կատարելութիւնը հոգեւոր սէրն է: Եւ քրիստոնէութիւնը այնքան զօրաւոր կերպով կը հաւատայ սիրոյ ուժ Ս. Հոգիին, որ կը յայտարարէ, թէ աստուածային սէրը մահը կը նուաճէ: Անիկա մահուան վտանգը յանձն կ'առնէ, որպէսզի ամբողջական կեանքին փորձառութիւնը ունենայ:

Բայց կեանքին գագաթը մարդուն մէջ՝ նաեւ վերհայեցողութիւնն է<sup>8</sup>: Վերհայեցողութիւնը կատարելագործումն է սիրոյ եւ գիտութեան: Մարդուն կեանքը կ'աճի ու կը կատարելագործուի այն արարքներով, որոնցմով անոր լուսաւորեալ իմացականութիւնը կ'ըմբռնէ ճշմարտութիւնը. մանաւանդ արարքներով՝ որոնցմով իր նուիրական ազատութիւնը սիրոյ ուժով կ'իւրացնէ եւ կը սեփականացնէ ճշմարտութիւնը, եւ իր հոգին ճշմարիտ կ'արարէ՝ ապրելով ըստ ճշմարտութեան<sup>9</sup>: Վերհայեցողութիւնը կեանքի, գիտութեան եւ սիրոյ միազանգուիլն է գերազանցապէս ջինջ յայտնատեսութեան մը ներքեւ, թէ ամէն սէր, ազատութիւն, ճշմարտութիւն եւ կեանք կը միանան իրենց աղբիւրին մէջ, որ Աստուած Ինքն է:

**ԾԱՆՕԹԱԳՐԱԿԱՆ**

- 3.- Մարթին Հայտտելբրի «Էն Եւ Ժամանակը» գործէն միտմ մը:
- 4.- Բնագրին մէջ չակերտուած է նախադասութիւնը, որ հաւանաբար յիշողութեամբ գրուած ըլլալուն՝ տարբերութիւն ունի արբիւրէն: Աղբիւրը՝ Փլպ 4.13: Ուշագրաւ է, որ բնագրին մէջ «Անտեսանելիին» չկայ: Ժամանակակից շարք մը ալլալեզու թարգմանութիւններու մէջ «Անոր» դերանունն է այնտեղ, այլ շարքի մը մէջ՝ «Քրիստոսի» անունը:
- 5.- «Circumdede runt me!»: Լատիներէնով՝ «զիս պաշարեցին» կը նշանակէ: Կը բուի, որ ծիսական անուանումն է գուցէ Մըրթընի կողմէ անգլերէնի թարգմանուած Սաղմոսին: Ահա անոր առաջին համարը. «Գժոխի տանջանքները զիս պաշարեցին/մահը ուռկանի մը մէջ զիս առաւ եւայլն»:
- 6.- Հեղինակը օգտագործած է Աստուածաշունչի լատին թարգմանութեան՝ Վուկաթայի Սաղմոս 17-ն: Հակառակ տարբերութիւններուն՝ քաղցի նոր Աշխարհաբար Թարգմանութեան մատուցածը:
- 7.- Տե՛ս Մտ 13.39-ն եւ 16.25-ը:
- 8.- «Contemplation» բառը «հայեցողութիւն» կը թարգմանուի: «Վերհայեցողութիւն» բարդացեալ բառը՝ պարզապէս թելադրելու համար եզրին տարբերութիւնը ոչ-կրօնական հայեցողութիւններէն:
- 9.- Յղում Եփ 4.15-ին:

**«ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ»**

**ԿՐԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ**  
**ՄԻՍԷ ԱՆԹԻՒԱՍ**  
**ՓՈՒՆԱԴՐՈՒԹԻՒՆ**

**ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ.**

ԴԵՊՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ

1

Մինչեւ 1914, երբ պիտի հասնէր տառապանքներուն գագաթնակէտը<sup>654</sup>, Սահակ Կաթողիկոս փոխաշնորէն «իր տառապեալ հօտին պէտքերը հոգալու, հայոց վերագրուած զրպարտութիւնները հերքելու եւ մինչեւ Կայսերական գահը բողոքներ ուղղելու, եւ արկածեալ տեղեր այցելելու» մէջ էր եղած<sup>655</sup>: Նաեւ թէ՛ «համակրական զգացումներ» հրաւիրած էր վրան<sup>656</sup>:

Այն «համակրական զգացումներ»էն ամենէն յուզիչը Զապէլ Եսայեանինն է: Եսայեան իր մէկ նամակին մէջ, յիշելով Կաթողիկոսին հետ իր հանդիպումը, այսպէս է ըսած. «տարօրինակ, աննկարագրելի ազդեցութիւն ըրաւ իմ վրաս Կաթողիկոսը. կարծես պատմութենէն իջած դէմք մըն է. մեծ հաճոյքով զինք Վեհափառ կը կոչեմ եւ առաջին անգամ է, որ կեանքիս մէջ հպատակութեան միտումներ կը զգամ. ինծի կը թուի, որ մեր պատմութեան մեծ դէմքերէն մէկն է, որ վերադարձած կեանքի՝ Կիլիկիոյ աւերակներուն մէջ կը թափառի»<sup>657</sup>:

Աղէտէն ետք, Կիլիկիան «անհաց, անլոյս եւ հոգեւորապէս գրեթէ անմխիթար» կացութեան մատնուած էր<sup>658</sup>:

Լուրով մը «Տաճար» շաբաթաթերթը հետեւեալը փոխանցած է. «Կիլիկիոյ զանազան կողմերէն հասած նամակներ շատ տխուր գոյներով կը նկարագրեն տեղացիներու ոչ միայն նիւթապէս, այլեւ

հոգեւորապէս ու բարոյապէս լքեալ վիճակը: Հարիւրաւոր տնտէր բնակչութեամբ գիւղեր ու քաղաքներ գուրկ կը մնան հոգեւոր հովիւէ, մինչ բաթերաներ եւ միսիոնարներ եռանդուն գործունէութիւն ցոյց կու տան (...) Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կամ Առաջնորդութեանց ջանքերուն հակառակ, կարելի չէ եղած գոհացում չտալ այս անհրաժեշտ պէտքին, եւ ժողովուրդին ուղղուած սրտառուչ կոչերն ալ անպատասխանի մնացած են»<sup>659</sup>:

Կաթողիկոսը յաճախակի աղերսներով դիմած էր համայն հայութեան, եւ յիշեցուցած, թէ «ազգը պէտք ունէր հացի, դպրոցի եւ եկեղեցիի»<sup>660</sup>:

Նախքան Աղէտը համատարած էր աղքատութիւնը. հազիւ հանապազօրեայ հաց մըն էր մեծամասնութեան կերածը: Աղէտէն ետք՝ ժամանակ մը սովը: Ապա հետզհետէ ու գրեթէ ինքնաբերաբար թշուառօրէն պիտի գոհանար ժողովուրդը, մինչեւ որ հինգերորդ տարին՝ կեանքը հասնէր «կանոնաւոր ընթացք»ի<sup>661</sup>: Այսինքն՝ մնացորդ որբերը մեծնային, այրիները իրենց գլխուն ճարը գտնէին, հարուածին ծանրութենէն ինկած կիլիկեցիներ վերականգնէր, վնասները մասամբ դարմանուէին, աւերակ տուններ վերաշինուէին:

Դպրոցի խնդիրը: Կաթողիկոսը իր ծանրածանր պաշտօնը ստանձնած օրէն «սրտի կսկիծով» տեսած էր, թէ «Կիլիկեան հայութիւնը հոգեւոր եւ կրթական արժանաւոր պաշտօնէից չգոյութենէն կը տառապէր»<sup>662</sup>: Ուստի, «պէտքին մասամբ գոհացում տալու նպատակաւ» կարելին ըրած էր, բայց չէր յաջողած: Քանի որ երկրին քաղաքական կացութիւնը, Կաթողիկոսարանին եւ առհասարակ կիլիկեցիներուն աղքատութիւնը անյաղթելի արգելքներ յարուցած էին համեստ բաղձանքին առջեւ<sup>663</sup>: Կաթողիկոսը «ի սպառ անպատաստ պայմաններու ներքեւ ու առանց արտաքին օժանդակութեան» հաստատած էր դպրանոցը<sup>664</sup>: Անիկա 1906-1909 տարիներու նախախայրիքը ընծայելու կը պատրաստուէր: Նաեւ կար յոյսը, թէ շուտով գումարելի Կիլիկեան թեմերու պատգամաւորական ժողովին՝ ընդհանրապէս Կիլիկեան կրթական գործին եւ ի մասնաւորի Մայրավանքին «արժանավայել» ծառայութիւնը վերահաստատելու որոշում առնուէր, ու ահա վրայ կը հասնէր Աղէտը ու «վերիվայր» կը շրջէր ամէն ինչ<sup>665</sup>:

1909-էն ետք, Կաթողիկոսը պիտի խանդավառուէր «Կիլիկեան ձեմարան» մը բանալու ամերիկայէն եկած գաղափարով մը<sup>666</sup>: Իր փափաքը պիտի ըլլար, որ այն ձեմարանը Մայրավանքին մէջ հաստատուէր, բայց գաղափարը յայտնողներուն նախընտրութիւնը Այնթապը մնար: Գաղափարն մարմին պիտի չառնէր երբեք...

Յուսահատութեամբ յղի օրերուն մէջ, միութարութեան շող մըն էր Հաճընի Աղջկանց Վարժա-

րանի շինութեան նախաձեռնութիւնը՝ տեղւոյն Առաջնորդին՝ Պետրոս վրդ. Սարաճեանի կողմէ (ապագայ Աթոռակիցը ու ետքը՝ Գահակալը Կիլիկիոյ): Նախաձեռնութեան յայտարարութիւնը կատարուած էր 1912-ին Սահակ Կաթողիկոսի ի Հաճըն Հովուապետական այցելութեան առիթով<sup>667</sup>: Վարժարանը Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից պիտի բարձրանար եւ մէկուկէս տարուայ շինութեան աշխատանքէ մը վերջ՝ 1914-ի վերջաւորութեան աւարտէին գործերը: Ինչպէս նկարագրուած է՝ «եօթն յարկեան փառաւոր, հոյակապ վարժարան մըն էր» անիկա, որ ի յիշատակ Գիբրի Գիւլտին՝ Սահակ-Մեսրոպեան անունով մկրտուէր<sup>668</sup>:

Եկեղեցւոյ վիճակը: Կիլիկիան ամէն զրկանքներու հետ նաեւ գուրկ էր իր մայր եկեղեցւոյ մխիթարութենէն<sup>669</sup>: Քանզուած եկեղեցիներ, փակուած ու փակուող եկեղեցիներ: Եւ շատ քիչ՝ եկեղեցականութիւնը:

1911-ին, Ս. Լուսաւորչի Մուսն ի Վիրապն տօնին օրը, Սահակ Կաթողիկոս Մայրավանքին մէջ 3 եպիսկոպոսներ (Ատանայի Առաջնորդ՝ Տ. Ներսէս ծ. վրդ. Դանիէլեան, Եոզկատի Առաջնորդ՝ Տ. Խորէն ծ. վրդ. Դիմաքսեան, Կաթողիկոսական փոխանորդ՝ Հրանդ ծ. վրդ. Կարոյեան — այս վերջինը պիտի վերանուանուէր՝ Եղիշէ) օծած էր: Նախքան օծումը զանոնք յորդորելով՝ ըսած. «Վիճակիս եպիսկոպոսական պակասը լրացնելու ժամը հասած է: Կիլիկիոյ եկեղեցեաց կարօտութիւնը այնքան բազմազան եւ պէտքը այնքան բազմատեսակ է, որ ձեր գործունէութեան ասպարէզը սահմանափակել անհնար է»<sup>670</sup>: (Այս եպիսկոպոսներէն Ներսէսն ու Խորէնը նահատակուեցան Մեծ Եղեռնին):

Քահանաները սակաւաթիւ, առհասարակ տարեց, անճարակ, անօթի ու թշուառ էին<sup>671</sup>: Քահանայ մը ահագանգած է, գրելով. «Արթննայու եւ ոգեւորուելու ժամանակն է, երբ տակաւին ատեն կայ (...) Կիլիկիոյ այս արկածեալ վայրերուն մէջ եկեղեցիներու գոցուելը՝ ապագայ փակումներու նախաքայլերն են միայն»<sup>672</sup>: Եւ յիշեցնելով Կաթողիկոսին կոչը, որ ժողովուրդի հոգեւոր պէտքերը հոգալու համար տարեկան 164 լիրայի անհրաժեշտութիւնը շեշտած էր, առաջարկած՝ «անհրաժեշտ է հաւատացեալ եկեղեցասէրներէ կազմուած ընկերութիւն մը, որուն նպատակը պէտք է ըլլայ ներքին առաքելութիւն, որ բոլոր մեծ եկեղեցիներու մէջ գոյութիւն ունի: Եւ այն կազմակերպութիւնը պէտք է աշխատի ժամանակի ոգւոյն համաձայն ուսեալ ու զարգացեալ եկեղեցականներ պատրաստել, եկեղեցւոյ կեանքին ջիղը՝ բեմը զօրացնել, կրօնական զգացումը ժողովուրդի սրտին մէջ վառ պահել, անհովիւ մնացած ժողովուրդներու քահանայ հասցնել, աւետարանական

առողջ սկզբունքները տարածել, եւ մէկ խօսքով՝ հոգիի կենսական պէտքը հոգալ»<sup>673</sup>: Կոչէն տարի մը պիտի անցնէր, երբ Ամերիկայէն երկու նուիրատուներ ընդառաջէին Կաթողիկոսի կոչին<sup>674</sup>:

Սակայն քահանային երազանքը մոռցուէր...

Յիշատակելի է 20 Ապրիլ 1914-ի Միւռոնի Օրհնութիւնը: Սահակ Կաթողիկոս իր դահակալութեան առաջին տարին կատարած էր սրբազան արարողութիւնը, սակայն «յաջորդական պատահարներ» ի դերեւ հանած էին «ժողովրդեան բարեպաշտական ակնկալութիւնը»<sup>675</sup>: Միւռոնի Օրհնութեան համար այս խորհրդածութիւնը ըրած է Հալէպէն՝ Սասկան վարդապետ. «էջմիածին իր Ս. Միւռոնի ծաղիկները կը քաղէ Արարատայ լանջքերէն, Աւարայրի դաշտերէն, Տղմուտի ափերէն, ուր կարմիր Վարդաններ են ինկեր, հայ ցեղիս լոյս հաւատքին համար: Կիլիկիոյ Հայրապետանոցն ալ իր Ս. միւռոնի ծաղիկները, զմպուլները կը քաղէ երբեմնի Հայութեան փառքը պանծացնող Սիսուանիս առիւծներու սարերէն, Ատանայի կարմրաներկ դաշտերէն, Սիհունի ու Յիհանի ափերէն: Երկուքին ալ Միւռոնի ծաղիկները սուրբ են ու նուիրական. անոնք հայ նահատակներու արիւնովն են ծլեր ու բողբոջէր, հայ արեւովն ու շնչովն են աճեր (...) հայուն միւռոնն է ան, բիւրուցս բիւր հայ մարտիրոսագրութեան կեանքի ցօղովն է շաղախուն»<sup>676</sup>:

(Շարունակի 45)

- ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
- 654.- ՕԱԳ, յօդ. 3122, u 5447:
- 655.- Ն, u 5446:
- 656.- Անդ:
- 657.- Զապէլ Եսայեան, Նամակներ, Երեւան, 1977, է 102:
- 658.- Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին Սրտառուջ Կոչը, Տաճար, 5 Յունուար, 1911, է 213: Յետ այսու շարաքաթերթին յղումը՝ Տ:
- 659.- Կիլիկիա Հոգեւորապետ Եւ Նիւթապետ, Տ, 14 Յունուար, 1912, է 29:
- 660.- Անդ:
- 661.- ԿՊԿ u 915:
- 662.- ԿԿ, է 96:
- 663.- Անդ:
- 664.- Անդ:
- 665.- Անդ:
- 666.- Ն, է է 98, 99:
- 667.- ԿՊԿ, է 912:
- 668.- Անդ:
- 669.- ԿԿ, է 90:
- 670.- Կարապետ Քինյ. Երեւանեան, Եպիսկոպոսական Ձեռնադրութիւնը Սոյ Մայրավանքին մէջ, Տ, 16 Ապրիլ, 1911, է 229:
- 671.- Յարութիւն Քինյ. Եսայեան, Կիլիկիոյ Մէջ հոգեւոր Եւ Բարոյական Տագնապալի Վիճակ, Տ, է 4 Սեպտեմբեր 1911, է 545:
- 672.- Ներսէս Քինյ. Թավուգեան, «Եկեղեցիները Հեռոգիստէ Պիտի Գոցուի Վ», Տ, 21 Յունուար 1912, է 44:
- 673.- Ն, է է 41-45:
- 674.- Զարմայր Քահանայ, «Ո՛չ, Պէտք Զէ Գոցուին Եկեղեցիները», Տ, 10 Մարտ, 1912, է 137:
- 675.- Սահակ Կաթողիկոս, Շրջաբերական, Տ, 20 Մարտ, 1920, է 103:
- 676.- Սասկան վարդապետ, Ս. Միւռոնի Օրհնութիւնը Կիլիկիոյ Մայրավանուց Մէջ, Տ, 1 Ապրիլ 1914, է 128:

# Մ ՈՒՐ Զ ԱԿՈՒ

## Առաջնորդանիս Մայր Եպեղեօ

---

ԿԱԶԱԿԵՐՊՈՒԹԵԱՐ՝

### ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

ԵՒ

### ՏԻԿԱՆՅ ՕԺԱՊԱԿ ՅԱՆԱՆԱԽՈՒՄԻՆ

կը մատուցուի

# ՄԻՋԻՆՔԻ ԸՆԹՐԻՔ

Չորեքշաբթի, 7 Մարտ 2018  
Երեկոյեան ժամը 8:00  
Մոնթրէալի Հայ Կեդրոն

---

Տեղեր սպասովկու համար հաճեցէք հեռաձայնել  
Տիար Վարդան Բարայսեանին՝ 438 863 0272,  
կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ 514 331 5445 x202 քիփն,

**Մուտքի նուէր՝ 25\$**

## **ՄԵԾ ՊԱՀՔԻ ԼՍԱՐԱՆ**

**ՅԵՏ ԽՆՈՒՆՈՒՄ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ.**

**ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԵՐ 7.00**

**3**

**Չորեքշաբթի, 28 Փետրուար**

**Նիւթ՝ Մակարայեցիներուն օրինակը Վարդանանց կեցուածքին մէջ**

**Կը մատուցէ Թորոս Սրկ. Պապիկեան**

**4**

### **ՄԻՋԻՆՔ**

**Չորեքշաբթի, 7 Մարտ**

**5**

**Չորեքշաբթի, 14 Մարտ**

**Նիւթ՝ Հաւատքը տարագրութեան մէջ**

**(Հայեացք Ս. Գրքին մէջ արձանագրուած փորձառութեան վրայ)**

**Կը մատուցէ Գերյ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան**

**6**

**Չորեքշաբթի, 21 Մարտ**

**Նիւթ՝ Ծնորհքներն ու պարգեւները վասն ազգակերտումի**

**Կը մատուցէ Կարօ Սրկ. Նոյնտեան**

### **ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

**Ուրբաթ օրերը առաւօտեան ժամը 9.00-ին՝**

**(2, 9, 16, 23 Մարտ),**

**Նաև Կիրակի օրերը \_ 4, 11, 18 Մարտ \_**

**նախքան Ս. Պատարագը՝**

**առաւօտեան ժամը 10.45-ին:**